ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2021թ. N 1-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 164–րդ հոդվածի 2-րդ մասով և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2013 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 102-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի համաձայն **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենների 2021թվականի ամենամյա արձակուրդների գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 հունվարի 11
Ջերմուկ

Հավելված

Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թ.
հունվարի 11-ի N 1-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱՖԻԿ

Հ/հ	Պաշտոն	Ազգանուն, անուն	Արձակուրդի ժամանակահատվածը	Օրերի քանակը
1	համայնքի ղեկավար	Հովհաննիսյան Վարդան	սեպտեմբեր	24
2	համայնքի ղեկավարի տեղակալ	Մարգարյան Սամվել	փետրվար	24
3	համայնքի ղեկավարի տեղակալ	Խաչատրյան Աշոտ	հոկտեմբեր	24
5	համայնքի ղեկավարի խորհրդական	Դավթյան Հայկ	հունիս	24
6	վարչական ղեկավար	Մկրտչյան Հայրապետ	օգոստոս	24
7	վարչական ղեկավար	Ասատրյան Սեդրակ	սեպտեմբեր	24
8	վարչական ղեկավար	Աբրահամյան Անդրանիկ	հունվար	24
9	վարչական ղեկավար	Առաքելյան Ռոման	մայիս	24
10	աշխատակազմի քարտուղար	Թադևոսյան Գոհար	հոկտեմբեր	24
11	Սոց. աջակցության բաժնի պետ	Սաֆարյան Արա	ապրիլ, հոկտեմբեր	12+24
10	ՔԿԱԳ բաժնի պետ	Սաղաթելյան Լուսիկ	սեպտեմբեր	24
11	Ֆինանսական բաժնի պետ	Ղազարյան Արմինե	հունվար	24
12	Գլխավոր մասնագետ-աուդիտոր	Հայրապետյան Արման	փետրվար, օգոստոս	24+24
13	«Զատիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն	Գայանե Հովհաննիսյան	մարտ, հոկտեմբեր	15+25
14	«Ջերմուկի համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	Մանուկյան Գոհար	հուլիս	25

15	«Ջերմուկի համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	Արմեն Խուրշուդյան	հուլիս	25
18	«Ջերմուկի համայնքի ճոպանուղի» ՀՀ տնօրեն	Արմեն Թադևոսյան	մարտ	24
19	«Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն	Գոռ Թադևոսյան	ապրիլ, դեկտեմբեր	20
20	«Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն	Պավլիկ Հարությունյան	ապրիլ	24
21	«Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան» ՀՀ տնօրեն	Ջեմֆիրա Սարգսայն	հունիս, նոյեմբեր	24+24
22	«Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն	Սաթենիկ Ներսիսյան	օգոստոս	25

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021թ. N 2-Ա

ՄԱՅԻՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 5-րդ գլխի պահանջները և հաշվի առնելով Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Մայիս Մկրտչի Մկրտչյանի դիմումը (մտից N 2, 11.01.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել Մայիս Մկրտչի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի N 2/6, N 2/5 և N 2-2/4 հասցեներում գտնվող կից հողամասերը միավորելու որպես մեկ գույքային միավոր և տրամադրել հետևյալ հասցեն՝ *Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Բարեկամության փողոց N 2/5,2/6,2-2/4:*

2. Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի N N 2/5,2/6,2-2/4 հասցեում գտնվող շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը վերահասցեավորել՝ *Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Բարեկամության փողոց N 2/4:*

3. Չեղյալ համարել Մայիս Մկրտչի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված և կից հողամասերի նախկին հասցեները:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 հունվարի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021թ. N 3-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շինարարների փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 112,6 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 60,27 քմ մակերեսով պահեստը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շինարարների փողոց N 2/1

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արմեն Դանիելյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 հունվարի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021թ. N 4-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,01829 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «ա» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 27-րդ շենքին հարակից տեղանքում գտնվող 0,01829 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 27/12:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 հունվարի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2021թ. N 5-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 168 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 143,29 քմ մակերեսով ծածկը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 11/1

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արարատ Խաչատրյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 հունվարի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021թ. N 6-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ԱՆԻ ՌՈՒԲԵՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՎԱՍԱԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 13-ի N 1 արձանագրության, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վասակ Զալիբեկի Հովսեփյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի հունվարի 12-ի N 19) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի եզրակացությունը՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչ Անի Ռուբենի Հովսեփյանի (ծնված՝ 2007 թվականի հոկտեմբերի 14-ին) նկատմամբ սահմանված խնամակալությունը դադարեցնել և խնամակալ Վասակ Զալիբեկի Հովսեփյանին ազատել խնամակալի պարտականությունների կատարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վասակ Զալիբեկի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 հունվարի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2021թ. N 7-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՍՏՈՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ N 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանի դիմումը (մտից N 23, 12.01.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի բնակիչ Ռոստոմ Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 40 հասցեում գտնվող 455,1 քմ մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների)՝ 394,26 քմ շինությամբ (պահեստ), բաժանել երկու առանձին գույքային միավորների՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից տրամադրված հատակագծերի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները.

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 40

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 40/1

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2021թ. N 8-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 34-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 18-ի «Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու, այդ հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ղեկավարի 05.05.2009 թվականի N 27-Ա և 16.02.2017 թվականի N 15-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում *«Հովհաննիսյան Նարեկ Հարությունի»* բառերը փոխարինել *«Գևորգյան Արտավազդ Վարազդատի»* բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 հունվարի15
Ջերմուկ